ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-101

« 18 » 07 2019թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2019 թվականի հուլիս ամսվա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք

գ. Ոսկեհատ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2019 թվականի N 10-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ , 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Վահրամ Քեշիշյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչ Վահրամ Խաչիկի Քեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող Ոսկեհատ համայնքի Մաշտոցի փողոցի 7 բնակելի տանը կից կառուցված բնակելի տուն 14,36 ք/մ արտաքին մակերեսով ինքնակամ շինության / (ներքին մակերեսը բնակելի տուն 9,0ք/մ), պարիսպ 0,14ք/մ սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է 2 5.000/ քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

3. Բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Մաշտոցի փողոցի 7/1 բնակելի տուն:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել Վահրամ Խաչիկի Քեշիշյանին սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

20 19թ. հուլիսի 12
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հուլիսի 2019 թ. թիվ 11-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող քաղաքացի Վահրամ Խաչիկի Քեշիշյանին պատկանող 04-081-029-010 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Մաշտոցի 7/1 հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի

Ղեկավար՝ Գ. Ներսիսյան

2019 թվականի 12 հուլիսի

գ. Ոսկեհատ